

**«Հայաստանի Հանրապետության կառավարության
2017 թվականի հոկտեմբերի 5-ի N1271-Ն որոշման
մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու
մասին» Հայաստանի Հանրապետության
կառավարության որոշման նախագիծը**

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

..... 2020 թվականի N - Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի N1271-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի
Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի
հոկտեմբերի 5-ի «Մինչև 2018 թվականի հունվարի 1-ը հաշվետու
ժամանակաշրջաններին վերաբերող հաշվարկներով (այդ թվում՝
ճշտված) առաջացող պարտավորությունների և դեբետային
գումարների հաշվառման կարգը սահմանելու մասին» N1271-Ն որոշման
(այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխություններն ու
լրացումները՝

- 1) Որոշման հավելվածի (այսուհետ՝ Հավելված) 1-ին կետը լրացնել նոր
նախադասությամբ՝

«Սույն կարգի կիրառման իմաստով դեբետային գումարներ են համարվում
մինչև 2018 թվականի հունվարի 1-ը հաշվետու ժամանակաշրջանների համար
հարկ վճարողի ներկայացրած հարկային հաշվարկներով (այդ թվում՝ ճշտված)
առաջացած՝ բյուջեից հաշվանցման ենթակա ավելացված արժեքի հարկի
գումարները (հարկվող շրջանառության նկատմամբ հաշվարկված ավելացված
արժեքի հարկի գումարները գերազանցող գումար):»,

- 2) Ուժը կորցրած ճանաչել Հավելվածի 4-րդ կետի 3-րդ, 4-րդ և 5-րդ
ենթակետերը,

- 3) Հավելվածում լրացնել նոր՝ 4.1-ին կետ՝

«4.1 Սույն կարգի 7-րդ կետում նշված՝ բյուջեից հաշվանցման ենթակա ավելացված արժեքի հարկի գումարները՝

1) վերադարձվում են հարկ վճարողի դիմումի հիման վրա այդ գումարները միասնական հաշվում հաշվառելու (միասնական հաշվին փոխանցելու) միջոցով.

2) հաշվանցվում (մարվում) են առանց միասնական հաշվում հաշվառվելու (միասնական հաշվին չեն փոխանցվում):»,

4) Հավելվածի 5-րդ կետի առաջին պարբերությունում «(անձնական հաշվի քարտերում գրանցվում)» բառերից հետո լրացնել «և մարվում» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2020 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների նկատմամբ: